ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Երասխ, erasxro@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2021 թվականի N 6

## ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 11 -Ի ԹԻՎ 3 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով:*

## ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Հաստատել Երասխ համայնքի ավագանու 2021թվականի մարտի 11 -ի թիվ 3 հերթական նիստի օրակարգը՝

1. Երասխ համայնքի ավագանու 21.08.2020թ. թիվ 11 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին :

2.Լյովա Սահակյանի, Անուշավան Շահբանդարյանի,Լևոնի Մարգարյանի և Անդրանիկ Շահբանդարյանի լիազոր անձ՝ Առաքել Շահվերդյանի դիմումները՝ իրենց անվամբ վարձակալված գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ հողատարածքների կադաստրային արժեքի 100% վճարելով սեփականության իրավունք ձեռք բերելու մասին:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՐԱԶ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Երասխ, erasxo@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2021 թվականի N 7

## 21.08.2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 11 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Ղեկավարվելով ,Իրավական ակտերի մասին Հայաստանի Հանրապետության օրենք ի70- րդ հոդվածով և Տեղական ինքնակառավարման մասին Հայաստանի Հանրապետության օրենքի* ***18****-րդ հոդվածի* ***29****-րդ մասով, ,Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի* ***14****$^{3}$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության* ***2011*** *թվականի դեկտեմբերի* ***29****-ի* ***N 1920****-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի* ***2009*** *թվականի դեկտեմբերի* ***22****-ի* ***N 1064****-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը,*

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

1. 21.08.2020թվականի թիվ 11 որոշման մեջ Երասխ համայնքի միկրոռեգիոնալ Արարատ-7 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծում ներառված Երասխ համայնքի գլխավոր հատակագիծը փոխել և կարդալ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ 7 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի Երասխ համայնքի գլխավոր հատակագծի նախագիծ (գոտևորման նախագիծ) համաձայն հավելված՝1-ի:
2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված ,Քաղաքաշինության մասին Հայաստանի Հանրապետության օրենքի 14$^{3}$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի ,Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան) գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում

| Երասխ համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Առաջնահերթ միջոցառումներ (1-5 տարի) | | | | |
| | **Գյուղատնտեսական հողերից** | **1,92** | | |
| | | | **Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակ. օբ.** | **1,76** |
| 1 | արոտ | 1,76 | կոմունալ ենթակառուցվածք | 1,76 |
| | | | | |
| | | | **Բնակավայրերի** | **0,15** |
| 2 | այլ հողատեսքեր | 0,05 | հասարակական կառուցապ. | 0,05 |
| 3 | այլ հողատեսքեր | 0,05 | հասարակական կառուցապ. | 0,05 |
| 4 | այլ հողատեսքեր | 0,06 | հասարակական կառուցապ. | 0,06 |
| | | | | |
| | **Բնակավայրի հողերից** | **3,05** | | |
| | | | **Բնակավայրերի** | **3,05** |
| 5 | Այլ հողեր | 0,46 | Տնամերձ կառուցապատման | 0,46 |
| 6 | Այլ հողեր | 1,08 | Տնամերձ կառուցապատման | 1,08 |
| 7 | Այլ հողեր | 0,52 | Տնամերձ կառուցապատման | 0,52 |
| 8 | Այլ հողեր | 0,51 | հասարակական կառուցապ. | 0,51 |
| 9 | Այլ հողեր | 0,17 | ընդհանուր օգտագործման | 0,17 |
| 10 | Այլ հողեր | 0,15 | ընդհանուր օգտագործման | 0,15 |
| 11 | Այլ հողեր | 0,16 | ընդհանուր օգտագործման | 0,16 |

| Երասխ համայնքի հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխությունները Ձև 1 | | | | |
|---|---|---|---|---|
| Հողամասի N գծագրի վրա | Առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային և/կամ գործառնական նշանակությունը | Մակերեսը (հա) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 |
| Միջնաժամկետ միջոցառումներ (5-10 տարի) | | | | |
| | **Բնակավայրի հողերից** | **2,39** | | |
| | | | **Բնակավայրերի** | **2,39** |
| 1 | Այլ հողեր | 2,39 | Տնամերձ կառուցապատման | 2,39 |

3. Ճյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներն՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՐԱԶ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԵՐԱՍԽ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Երասխ համայնք
ՀՀ Արարատի մարզ, գ. Երասխ, erasxro@mail.ru

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 մարտի 2021 թվականի N 8

## ԼՅՈՎԱ ՍԱՀԱԿՅԱՆԻ,ԱՆՈՒՇԱՎԱՆ ՇԱՀԲԱՆԴԱՐՅԱՆԻ, ԼԵՎՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ԱՆԴՐԱՆԻԿ ՇԱՀԲԱՆԴԱՐՅԱՆԻ ԼԻԱԶՈՐ ԱՆՁ՝ ԱՌԱՔԵԼ ՇԱՀՎԵՐԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԸ ՝ ԻՐԵՆՑ ԱՆՎԱՄԲ ՎԱՐՁԱԿԱԼՎԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՄԲ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԱՐԺԵՔԻ 100% ՎՃԱՐԵԼՈՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՁԵՌՔ ԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Հիմք ընդունելով վարձակալության պայմանագիրը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով.*

### ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Լյովա Սահակյանի /թիվ 01032021-03-0069վկայական, 1.5 հա/, Անուշավան Շահբանդարյանի /թիվ 17042018-03-0069 և 17022018-03-0059 վկայականներ, 1.0652 և 0.9348 հա /, Լևոն Մարգարյանի /թիվ 0072165 վկայական, 3.35 հա / և Անդրանիկ Շահբանդարյանի լիազոր անձ՝ Առաքել Շահվերդյանի ՝ /թիվ 24122019-03-0097 և 24122019-03-0095 վկայականներ , 4.83 և 1.07925 հա / կողմից, վարձակալված գյուղատնտեսական նպատակային նշանակությամբ հողատարածքների կադաստրային արժեքի 100% վճարելուց հետո կնքել ուղղակի վաճառքի պայմանագիր :

Կողմ-5 Դեմ-0 Ձեռնպահ-0

1. ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ ՎԱՐԴԱՆ
2. ԽՈՒԴՈՅԱՆ ԽԴՐ
3. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԳՅՈՒԼՆԱՐԱ
5. ՍԱՀԱԿՅԱՆ ՇԻՐԱ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌԱԴԻԿ ՕՂԻԿՅԱՆ